ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԱԳՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞րն է գործարարության ծրագրի արտադրական բաժնի առանցքային ցուցանիշը:** *(1 միավոր)*

1) կիրառվող ստանդարտները
2) ապրանքի իրացման սխեման
3) կանխատեսվող շահույթը
4) արտադրական կարողությունը

2 **Ո՞րն է կառավարման կազմակերպական կառուցվածքի անբաժանելի մասը:** *(1 միավոր)*

1) կառուցակարգը
2) աստիճանակարգը
3) համակարգը
4) արարողակարգը

3 **Լիազորությունը ռեսուրսների տնօրինման և կարգադրություններ անելու ինչպիսի՞ իրավունք է:** *(1 միավոր)*

1) ամբողջական
2) մասնակի
3) լիակատար
4) սահմանափակ

4 **Կառավարման ինչպիսի՞ գործառույթ է վերահսկողությունը**: *(1 միավոր)*

1) առաջնային
2) կարգավորիչ
3) եզրափակիչ
4) հիմքային

5 **Տրվածներից ո՞րն է ընկած նվազագույն աշխատավարձի սահմանման հիմքում:** *(1 միավոր)*

1) նվազագույն սպառողական զամբյուղը
2) նվազագույն պարենային զամբյուղը
3) նվազագույն պարենային ընտրությունը
4) նվազագույն սպառողական վարկը

6 **Բերվածներից ո՞րը կոնֆլիկտների լուծման միջանձնային եղանակի ոճ չէ:** *(1 միավոր)*

1) սահմանազատումը
2) փոխզիջումը
3) համահարթեցումը
4) համագործակցումը

7 **Քանի՞ մակարդակներով են ներկայացված մարդու պահանջմունքները Աբրահամ Մասլոուի պահանջմունքների դասակարգման տեսության մեջ:** *(1 միավոր)*

1) 5
2) 11
3) 14
4) 3

8 **Տարբերակներից ո՞րը *չի* դասվում նյութական խթանների շարքին՝ ըստ ժամանակակից տեսությունների:** *(1 միավոր)*

1) մասնակցողականությունը
2) հավելավճարը
3) պարգևը
4) աշխատավարձը

9 **Ի՞նչ է անգլերենից թարգմանաբար նշանակում «սթրես» բառը:** *(1 միավոր)*

1) հյուծվածություն
2) լարվածություն
3) ջղայնություն
4) հոգնածություն

10 **Տարբերակներից ո՞րը սթրեսի տարատեսակ *չէ*:** *(1 միավոր)*

1) ֆիզիոլոգիական
2) սոցիալական
3) տեղեկատվական
4) փաստագրական

11 **Բերված տարբերակներից ո՞րը շուկայի հիմնական տարր չէ:** *(1 միավոր)*

1) առաջարկը
2) համագործակցությունը
3) մրցակցությունը
4) պահանջարկը

12 **Ինչի՞դեր է կատարում գինը առաջարկի և պահանջարկի միջև:** *(1 միավոր)*

1) բազմապատկիչի
2) փոխարկիչի
3) կարգավորիչի
4) խթանիչի

13 **Ի՞նչ փոփոխություններով է պայմանավորված կառուցվածքային գործազրկությունը:** *(1 միավոր)*

1) կլիմայական
2) տեխնոլոգիական
3) կառավարչական
4) դեմոգրաֆիական

14 **Տարեկան քանի՞ տոկոսից բարձր տեմպերով են աճում գները գերսղաճի (հիպերինֆլյացիա) դեպքում:** *(1 միավոր)*

1) 50 %-ից
2) 10 %-ից
3) 70 %-ից
4) 100 %-ից

15 **Կարճ ժամանակահատվածում ինչպիսի՞ կապ կա սղաճի և գործազրկության միջև՝ ըստ Ֆիլիպսի կորի:** *(1 միավոր)*

1) աճանցիալ
2) հակադարձ
3) փոխադարձ
4) անմիջական

16 **Այլ կերպ ինչպիսի՞ քաղաքականություն են համարվում սղաճի կարգավորման ուղղակի մեթոդները:** *(1 միավոր)*

1) հարկային
2) ծախսերի
3) եկամուտների
4) ներդրումային

17 **Տրվածներից ո՞րն է մարքեթինգային հետազոտության կիրառական գործիք***: (1 միավոր)*

1) դիտարկումը
2) փաստարկումը
3) հավաքագրումը
4) մոտարկումը

18 **Ինչպիսի՞ գործունեություն է մարքեթինգը՝ ըստ Ֆիլիպ Կոտլերի:** *(1 միավոր)*

1) տնտեսական
2) գործնական
3) վարչական
4) սոցիալական

19 **Ինչպիսի՞ բնույթ ունի վաճառքի խթանումը՝ որպես միջոցառումների համակարգ***: (1 միավոր)*

1) մարտավարական
2) երկարաժամկետ
3) կարճաժամկետ
4) ռազմավարական

20 **Որքա՞ն է փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի՝ օրենքով սահմանված առավելագույն թույլատրելի թիվը:** *(1 միավոր)*

1) 50
2) 25
3) 49
4) 36

21 **Հաշվետվություններից ո՞րը ֆինանսական փաթեթի կազմում *չի* ընդգրկվում:** *(1 միավոր)*

1) համապարփակ ֆինանսական արդյունքները
2) շրջանառության տեղեկագիրը
3) դրամական հոսքերը
4) սեփական կապիտալում փոփոխությունները

22 **Ի՞նչ է հաշվապահական հաշվառման մեթոդը:** *(1 միավոր)*

1) Երկու խումբ ցուցանիշների՝ տնտեսական միջոցների և դրանց գոյացման աղբյուրների հանրագումարային տվյալների հաշվեկշռային ընդհանրացումն է:
2) Ընթացիկ հաշվապահական տեղեկատվության ընդհանրացումն է:
3) Տնտեսական միջոցների ընթացիկ վերահսկողությունն է:
4) Հաշվապահական հաշվառման օբյեկտների ուսումնասիրության և հետազոտության եղանակների ամբողջությունն է:

23 **Ինչպիսի՞ գնաճ է նպատակադրում Կենտրոնական բանկը:** *(1 միավոր)*

1) լողացող
2) չափավոր
3) զսպող
4) հաստատուն

24 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված համայնքային բյուջեների բաղկացուցիչ մասերի համարները:** *(1 միավոր)*

1. պահուստային, 2. վարչական, 3. ֆինանսական, 4. ֆոնդային

1) 1 և 2
2) 2 և 4
3) 3 և 4
4) 1 և 3

25 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված ուղղակի հարկերի համարները:** *(1 միավոր)*

1. ճանապարհային, 2. ակցիզային, 3. եկամտային, 4. ավելացված արժեքի

1) 1 և 3
2) 2 և 3
3) 2 և 4
4) 1 և 4

26 **Տրվածներից ո՞րը ֆինանսական ռեսուրս չէ:** *(1 միավոր)*

1) երկարաժամկետ վարկերը
2) հիմնական միջոցները
3) կրեդիտորական պարտքերը
4) սեփական կապիտալը

27 **Հաշվապահական հաշվառման վարման ո՞ր փուլին են հաջորդում տարեվերջյան ճշգրտումները:** *(1 միավոր)*

1) հաշիվներում գրանցման
2) գրանցամատյանների վարման
3) շրջանառության տեղեկագրի կազմման
4) սկզբնական հաշվառման կազմակերպման

28 **Տրվածներից ո՞ր մեթոդով են տնտեսական միջոցները ստանում դրամական արտահայտություն:** *(1 միավոր)*

1) փաստաթղթավորման
2) գնահատման
3) կրկնակի գրանցման
4) գույքագրման

29 **Որպես ի՞նչ են դասակարգվում վաճառքի համար պատրաստված հաստոցները:** *(1 միավոր)*

1) նյութեր
2) կապիտալ
3) արտադրանք
4) ապրանք

30 **Տրվածներից ո՞րը մրցակցության գործառույթ չէ: Նշել դրա համարը:** *(1 միավոր)*

1) հաշվեկշռային
2) կարգավորման
3) հակամենաշնորհային
4) գնագոյացման

31 **Տրվածներից 3-ը հաշվապահական հաշվառման մեթոդի տարրեր *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. հաշվեգրումը
2. գույքագրումը
3. վերագնահատումը
4. կրկնակի գրանցումը
5. հաշվանցումը
6. փաստաղթավորումը
7. գնահատումը

32 **Տրվածներից 3-ը հարկային համակարգի սկզբունքներ *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. անկախությունը
2. հաշվետվողականությունը
3. օբյեկտիվությունը
4. համախմբվածությունը
5. թափանցիկությունը
6. գաղտնիությունը
7. պարզությունը

33 **Տրվածներից 3-ը հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի դասեր *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. եկամուտները
2. ընթացիկ ակտիվները
3. դեբիտորական պարտքերը
4. սեփական կապիտալը
5. կրեդիտորական պարտքերը
6. ծախսերը
7. փոխառությունները

34 **Տրվածներից 3-ը առևտրային կազմակերպությունների ռազմավարական պլանավորման գործառույթի իրականացման փուլեր են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ճշգրտող գործողությունների իրականացումը
2. արտաքին միջավայրի գործոնների վերլուծությունը և գնահատումը
3. որոշումների ընդունման սահմանափակումների ու չափանիշների ձևակերպումը
4. առաքելության և նպատակների սահմանումը
5. ստանդարտների մշակումը
6. ներքին միջավայրի իրավիճակային վերլուծությունը
7. փաստացի արդյունքների համեմատումը ստանդարտների հետ

35 **Տրվածներից 3-ը գործարարության ծրագրի (բիզնես պլան) բաժիններ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ֆինանսական ծրագիրը և ֆինանսական ռազմավարությունը
2. փոփոխությունների կառավարումը
3. կոնֆլիկտների կառավարումը
4. կառավարման կազմակերպումը և անձնակազմը
5. որակի կառավարումը
6. ներդրումների կառավարումը
7. ռիսկերի կանխատեսումը և կառավարումը

36 **Տրվածներից 3-ը, ըստ կառավարման ժամանակակից գրականության, կառավարման հիմնական կամ ընդհանուր գործառույթներ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. շահադրդումը
2. պատվիրակումը
3. լիազորումը
4. պլանավորումը
5. կանխատեսումը
6. կազմակերպումը
7. համակարգումը

37 **Տրվածներից 3-ը փողի գործառույթներ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. փոխանակման միջոցի
2. շրջանառության միջոցի
3. փոխանցման միջոցի
4. հիմնական միջոցի
5. կուտակման միջոցի
6. վճարման միջոցի
7. շրջանառու միջոցի

38 **Տրվածներից 3-ը գործազրկության տեսակներ *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. համակարգային
2. պարբերաշրջանային
3. փոխանակային
4. ֆրիկցիոն
5. սեզոնային
6. գործառութային
7. տարածաշրջանային

39 **Տրվածներից 3-ը վերջնական սպառողների շուկան *մարքեթինգային տեսանկյունից* հատվածավորելու չափանիշներ են: Նշել այդ տարբերակների համարները:** *(3 միավոր)*

1. աշխարհագրական
2. վարքագծային
3. հետագծային
4. ժողովրդագրական
5. ազգագրական
6. ժամանակագրական
7. ռազմավարական

40 Տրվածներից 3-ը, ըստ *նշանակության դասակարգման*, մարքեթինգային տեղեկատվության (տվյալների) տեսակներ *չեն*: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. նորմատիվային
2. զգուշացնող
3. փաստաթղթային
4. պարբերական
5. վերացական
6. տեղեկատվական
7. հանձնարարական